Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
հուլիսի 4-ի նիստի N 27
արձանագրային որոշման

**Մինչև 58.3 մլն տարեկան շրջանառություն ունեցող ՀՀ տնտեսվարող սուբյեկտներին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացմանն անցնելը խրախուսելու համար զանգվածային իրազեկման և ուսուցման միջոցառումների կազմակերպման և դրանց կատարման ժամանակացույցը.**

| Հ/Հ | Մարմինը | Իրականացվելիք միջոցառումը | Ժամանակացույցը |
|---|---|---|---|
| **1** | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | 1) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին պաշտոնական ինտերնետային կայքի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով իրազեկման աշխատանքների ապահովում:<br>2) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին էլեկտրոնային փոստի միջոցով մի շարք տնտեսվարող սուբյեկտներին ծանուցում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |
| **2** | ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | 1) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին պաշտոնական ինտերնետային կայքի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով իրազեկման աշխատանքների ապահովում:<br><br>2) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողների կողմից էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների վերաբերյալ տեղեկատվական և ուսումնական նյութերի պատրաստում:<br><br>3) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողներին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ ուսումնական միջոցառումների կազմակերպում:<br><br>4) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողներին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացմանն առնչվող խնդիրների վերաբերյալ (անհրաժեշտություն առաջանալու դեպքում) պաշտոնական պարզաբանման տրամադրում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական)<br><br>Մինչև Հոկտեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական)<br><br>Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |
| **3** | «Հայաստանի ՓՄՁ-ների զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | 1) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին պաշտոնական ինտերնետային կայքի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով իրազեկման աշխատանքների ապահովում: | |

| | | | |
|---|---|---|---|
| | | 2) Մարզերում իրականացվող «ՀՀ հարկային օրենսդրության փոփոխությունները և կիրառման հարցերը» դասընթացների ընթացքում գործարարներին իրազեկում:<br>3) Շահառու և գործընկեր ՓՄՁ-ներին էլեկտրոնային փոստի միջոցով իրազեկում:<br>4) ԳԾՄ-ների հետ համագործակցություն/Ուսուցողական դասընթացների ընթացքում տեղեկատվության ներկայացում և տրամադրում:<br>5) Այլ դասընթացների ընթացքում գործարարների շրջանում տեղեկատվության տարածում:<br>6) «ՓՄՁ լրատու» հեռուստահաղորդման միջոցով h2 հեռուստաընկերության եթերով տեղեկատվության տարածում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |
| **4** | «Կենսաթոշակային համակարգի իրազեկման կենտրոն» հիմնադրամ (համաձայնությամբ) | 1) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին պաշտոնական ինտերնետային կայքի, մամուլի և զանգվածային լրատվության այլ միջոցներով իրազեկման աշխատանքների ապահովում:<br>2) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողներին հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման վերաբերյալ դասընթացների կազմակերպում:<br>3) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողների կողմից էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների վերաբերյալ տեղեկատվական և ուսումնական նյութերի տպագրում:<br>4) Մինչև 58,3 մլն շրջանառություն ունեցող տնտեսվարողներին էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ խորհրդատվության տրամադրում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |
| **5** | Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ (համաձայնությամբ) | 1) Էլեկտրոնային ստորագրության ձեռքբերման ընթացակարգերի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտներին իրազեկման աշխատանքների իրականացման միջոցառումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:<br><br>2) Էլեկտրոնային ստորագրության ձեռքբերման ընթացակարգերի վերաբերյալ տնտեսվարող սուբյեկտների իրազեկմանն ուղղված լայնածավալ աշխատանքների իրականացում: | Մինչև Հոկտեմբերի 1-ին տասնօրյակ<br><br>Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |
| **6** | Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի գործարարության աջակցման գրասենյակ (համաձայնությամբ) | 1) Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման առավելությունների մասին էլեկտրոնային փոստի և կլոր սեղան հանդիպումների միջոցով շահառու և գործընկեր գործարար միավորումներին իրազեկում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |

| | | | |
|---|---|---|---|
| **7** | Հաշվապահական Կենտրոն (համաձայնությամբ) | 1) Տեղեկատվության զետեղում Հայաստանի Հաշվապահների և Աուդիտորների Ասոցիացիայի (ՀՀԱԱ) Հաշվապահական Կենտրոնի ինտերնետային կայքում:<br>2) Էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկատվության տրամադրում ՀՀԱԱ-ի 256 լիիրավ անդամներին (հաշվապահներ,աուդիտորներ) և 100-ից ավել անդամության թեկնածուներին:<br>3) Հաշվապահական կենտրոնի դահլիճում ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչների հետ հանդիպման կազմակերպում և տեղեկատվության ներկայացում:<br>4) Կենտրոնում գրանցված ՓՄՁ սուբյեկտներին էլեկտրոնային փոստի միջոցով տեղեկատվության տրամադրում:<br>5) Մարզերում կազմակերպվող անվճար դասընթացների ընթացքում մարզային ՓՄՁ սուբյեկտների ներկայացուցիչներին տեղեկատվության տրամադրում:<br>6) ՀՀԱԱ որակավորման ծրագրի շրջանակներում ընդգրկված մասնակիցներին համապատասխան տեղեկատվական նյութերի տրամադրում:<br>7) Հաշվապահական Կենտրոնում ընդգրկված գործարար ծառայություններ մատուցող կազմակերպություններին համապատասխան տեղեկատվության տրամադրում:<br>8) ՀՀԱԱ Հշվապահական Հաշվառում և Աուդիտ պարբերականում տեղեկատվական նյութերի զետեղում: | Հոկտեմբերի 1-ին տասնօրյակից սկսած (շարունակական) |